

Այս խորհրդածուծեան եմէ ապացոյցութիւններ հարկաւորին՝ պատրաստ եմք յիւրումն ժամանակի երկարացոյնս զայն մշակել, իսկ այժմ կրտսնամբ դարձեալ մեր վերահաստատեալ թատրոնին:

Յառաջակց բարեկենդանի օրերը եւ Զատիկից յետոյ թատրոնական խումբը մտադիր է ներկայացնել «Կոռնակ եւ Ներսէս» եւ «Աշակ Բ» ողբերգութիւնները, յորոց վերջինը տեղական բարբառի փոխուած է կլսեմք, նոյնպէս քանի մի ողբերգութիւնը եւ կատակերգութիւններ, յորոց զոյացած արդիւնքը նոյնպէս տեղւոյս Գպրոցաց պիտի յատկանայ: Այս անդամուան ներկայացումներէն, հանելով ծախքը, որ բնականապէս շատ էր եւ անհրաժեշտ թատրոնական զգեստաց եւ այլ կարեւոր զարդաց եւ պարագայից պակասութիւնը հոգալու համար, յաւելեալ հարկը ռուբլին յանձնուած է Վաղարշապատի երկսեռ Գպրոցաց հոգաբարձութեան արդիւնաւոր տնօրէնութեանը, որոց երկուքն ալ, եւ մանաւանդ օրիորդաց Գպրոցին ուսումնասէր հոգաբարձուհիք եռանդնալից սիրով հետամուտ են իւրեանց ծնունդութիւնը առատածնունել թատրոնական գործոյն յառաջադիմութեանը:

Բարեմաղթելով մեր կողմանէ այսպիսի բարենպասակ մէկ հաստատութեան անընդհատ յորատեւութիւն եւ լիութի յաջողութիւն, չեմք կարող մեր սրբտաղին շնորհակալիքը չյայտնել հմուտ նկարիչ Պ. Սաղինեանցին, որ իւր վրձինը ծրարաբար նուիրած է թատրոնական նկարներու, պատկերներու, ինչպէս նաեւ նոր վարադուրի մը պատրաստութեանը, եւ դարձեալ երեւոյնայ Հոգաբարձութեանը, որ քանի մի ծեղր թատրոնական զգեստ ժամանակաւոր տուած են Վաղարշապատի թատրոնին:

Բաց յայնմանէ կլսուի, որ Պ. Փիլիպպոս Նաւասարդեանցը թատրոնական ժողովոյ վերջին նստին մէջ ստորագրութիւն մի բանալով հաւաքեր է 44 ռուբլի փող. իսկ Պ. Մովսէս Վարդանեանցը յանձն առեր է իւր սեփական ծախքովը պատրաստել թատրոնական քանի մի պարագայքը ինչպէս են սաղաւարթները, զըրանները, վահանները, թագերը եւն:

Իւրաքանչիւր ծեղնարկ այն ատեն միայն արդիւնաւոր կլինի եւ իւր նպատակին կհասնի, երբ անժամանակ շահը ընդհանուրի շահուց առջեւ կխոնարհուի եւ կմոռցուի, լայն ասպարէզ բանալով միաբանական եւ անշահասէր գործառնութեանց, զորս միշտ

պէտք է յարդէ տեղւոյս թատրոնասիրաց ընկերութիւնը, իրեն նշանաբան ունենալով տեղւոյս հասարակութեան մտաւոր եւ բարոյական զարգացումը:

ՀԱՅԳՈՐԴԻ.

25 Յուլի 1877.

Ի Վաղարշապատ:

ՍՈՒՐԶԱՆԴԼԻՔ ԲԵՒԶԱՆԴԵԱՆ.

ՆՊԱՍՏ ՄԱՆՁԷՍԹԷՐԻ ՀԱՅՈՅ.

Մանչէսթըրի Համազգային վաճառականք, որոց թիւը կարճեմք թէ 30ի չափ է, ըստ բարեգոյթ առաջարկութեան մեծարգոյ պարոնայից Եսայիան եղբարց, բարեհաճեցան մարդասիրաբար ստորագրութիւն մի բանալով մէջերնին, (որում քանի մը պատուաւոր անդդիացիք ևս մասնակից եղած են), 140 լիւա սթէրլին ժողովել, զոր աղյուսիրաբար նուիրեցին՝ ձեռամբ յիշեալ Եսայիան եղբարց՝ ինպատոհմ հրկիզեալ խղճալի Հայոց Սիվրիհիսարի. ուր յանցելումն, ինչպէս յայտնի է, ահագին հրդեհ մի պատահելով, հրոյ ճարակ ըրաւ 600 էն աւելի Հայոց տունն, նոցա եկեղեցին և երկու ազգային դպրատունն:

Ահաւասիկ ցուցակն ստորագրող յարգելիաց, որք ազգային շնորհակալութեան արժանի են.

| Մեծարգոյ պարոնայք            | Լ. Ս. |
|------------------------------|-------|
| Մանուկ Գաբամաճեան            | 10    |
| Յովհաննէս Յակոբեան           | 10    |
| Տ. և Վ. Գառակէօզեան          | 10    |
| Եղբարք Եսայիան               | 10    |
| Պիւրնս Էնտ Մաք—Իվէր          | 10    |
| Բաբաեանի Էնտ քօնրանի.        | 10    |
| Լէյլընտ Էնտ քօնրանի.         | 10    |
| Ֆրնտըքեան եղբարք և Մէրմէրեան | 5     |
| Եղբարք Ծովհաննէս             | 5     |



|                                                 |     |
|-------------------------------------------------|-----|
| Պրովենյուլէ Էնտ Պօլէր . . . . .                 | 5   |
| Պօս վէր Պէրթիթ . . . . .                        | 5 5 |
| Ստեփան Սրարդարեան . . . . .                     | 5   |
| Սիւմիւշկերտանեան եղբարք . . . . .               | 5   |
| Մ. Պէշիքթաշլեան . . . . .                       | 4   |
| Մ. Յովսէփեան . . . . .                          | 4   |
| Պ. Ն. Լուսուսցօֆ . . . . .                      | 4   |
| Մարտիրոս Թօքսիլեան . . . . .                    | 3   |
| Մ. Լարէնց . . . . .                             | 3   |
| Լարէնց Էնտ քօնրանի . . . . .                    | 2 2 |
| Լ. Ա. արպետեան 2, Յ. Տայիեան 2. . . . .         | 4   |
| Ա. Մագսուտօֆ 2, Ա. Շահաթինարօֆ 2, . . . . .     | 4   |
| Յ. Յովակիմեան 2, Բ. և Ե. Մուստիչեան 2. . . . .  | 4   |
| Ա. Մարտիրոսեան 2, Գր. Գույում Ճեան 2, . . . . . | 4   |
| Բրժա. տէր Ղ. Էնդ վարդապետ . . . . .             | 1   |
| Գ. Պարտիզպանեան 1, Միշ. Բարազեան . . . . .      | 2   |
| Ա. Քրիկնա . . . . .                             | 1 1 |

Լիրա սթէրլին 140 8

Արշալոյս Արտրաշեան Թ. 1054.

Արշալոյս լրագրոյ 1057 - րդ թուէն  
ցաւօք սրտի կօրինակեմք հետեւեալ  
տեղեկութիւնքը:

ՆՈՐ ԶԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՀՆԳԱՍՏԱՆ.

Պէնկարս դաւառին մէջ Դաքքա անուն վա-  
ճառաշահ քաղաք մի կար ուր երեք ազգային  
ղլխաւոր և պարկեշտ ընտանիք գտանէին, որք ի  
Նախահարց իւրեանց ժառանգեալ ընդարձակ  
կալուածական գոյիւք և ուրիշ ճոխութեամբք՝  
պատուաւոր կերպիւ կապրէին, կրկառաւարէին  
զազգային եկեղեցին և հաստատուն կրպակէին  
զվաղեմի պատիւ Հայ ազգին, Անուամբ սոցա եւ  
պարտնայք Նիկի Պօղոս Յովակիմեան, Գրիգոր  
Պօղոսեան և Յովհաննէս Ստեփաննոսեան:

Այդ ցաւօք սրտի կիմանամք թէ ի յիշեալ  
հայկազուն վաճառականաց առաջինն՝ ծանր

պարտուց ներքե մնալով՝ (որոց գումարն 140 000  
անգղի լիւայից կը համարի կրսն), ի մտատան-  
ջութենէ և ի խորին տրամութենէն սրտի կը հի-  
ւանդանայ և կը մեռնի, Երկրորդն՝ որ ազգակից է  
հանգուցելոյն, երաշխաւոր գտնուելով նմա՝ ոչ  
սակաւ փնասուց եմթարկեալ է, և որդէս թէ  
այս ցաւն բաւական չլինէր, բարոյական մեծ  
կոկիծ մի ևս ունեցաւ մահաւամբ ամենասիրելի  
որդւոյն իւրոյ, Իսկ երրորդն՝ այս ինքն Պ. Յով-  
հաննէս Ստեփաննոսեան կաթուածի յանկար-  
ծահաս մահաւամբ զրաւի ի կենաց:

Ահա այս կերպիւ Դաքքայի Հայ ազգութեան  
ճրագը՝ զժաղդաբար՝ շիջեալ կը համարի այժմ,  
և տեղւոյն ազգային եկեղեցւոյն և քահանային  
պահպանութեան միջոցներն բոլորովն կրպակ-  
սին քանզի լրածնուս նայելով, մնացեալ փոք-  
րամիւ համազգի ժողովուրդն՝ ի պատճառս աղ-  
քատութեան՝ իւր ապրուստն և իւր անհրաժեշտ  
պիտոյքն անգամ հոգալու անբաւական է:

Դաքքայի սահմանաց մէջ երկու անտառային  
և մացառոտ կղզիք գոն, ուր արդիւնաբեր ըն-  
դարձակ ագարակք և կալուածք գտանէին, յո-  
րոց մի մասն մերազնէից վերաբերէր:

Աւերջացեալ ամին Նայեմիւրի սկիզբն զիշեր  
ժամանակ ահազին փութորիկ մի ելլելով, ծո-  
վուն ջուրը զրեթէ 30 ռանաչափ կը արձրանան  
և կը կոխեն զյիշեալ կղզիքն աւերելով քան-  
դելով զամենայն ինչ և ջրահեղձ ընկով զամե-  
նայն բանական և զանբան կենդանիս: Այս նոր  
տեսակ ջրհեղեղին զահ եղօղ մարդոց թիւն՝ ըստ  
տէրութեան յայտարարութեան 215 000 ի կը-  
հաննի, որոց մէջ տասն հազիք կը գտնուին յաղ-  
դայնոց մերոց:

Ի Հնդկաստանէ ընկալեալ թղթակցութիւն  
մեր՝ ահա այսպիսի աղէտալի եղելութիւններ կը-  
պարունակէ, որոց ոչ վարանեցաք Աղթային Նոբ  
յեթրէն վերնագիրն տալ: